# Հաշվետվություն

2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում

«Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված

մոնիտորինգի և դիտորդության վերաբերյալ

Սույն հրապարակումն իրականացվում է

Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ

ԵՐԵՎԱՆ 2013

Բովանդակություն


Գլուխ 1. 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում «Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված մոնիտորինգի և դիտորդության արդյունքները....3
Գլուխ 2. Ընտրությունների մատչելիության ապահովմանն ուղղված հանձնարարականներ և առաջարկներ ....8
Հավելված 1. Դիտարկման քարտ (մոնիտորինգ) ....14
Հավելված 2. Երևանի մատչելի և հիմնականում մատչելի տեղամասերի ցանկ....15
Հավելված 3. Ընտրատեղամասերում առկա խոչընդոտների վերաբերյալ թվային տեղեկություններ....17
Հավելված 4. Դիտարկման քարտ (քվեարկության օրը)....19

## Գլուխ 1. 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում «Ունիսոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված մոնիտորինգի և դիտորդության արդյունքները

Համաձայն մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իրավազորության հիմքը. այս կամքի արտահայտությունը պետք է լինեն պարբերական ու անեղծ ընտրությունները, որոնք պետք է իրագործվեն համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության կամ համարժեք ազատ ընտրական ընթացակարգերի միջոցով: Հավասար հնարավորությունների ապահովմամբ ընտրություններ իրականացնելու համար անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ, այդ թվում նաև համապատասխան՝ հարմարավետ և բոլոր ընտրողներին հասանելի, միջավայրի ապահովում: Վերջին կետի հետ կապված հաճախ խնդիրներ են առաջանում հատկապես հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, երբ, օրինակ, ընտրատեղամասի ֆիզիկական պայմանները դարձնում են այն անհասանելի՝ դրանով իսկ խոչընդոտելով գաղտնի և ազատ ընտրության իրավունքի իրացմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը Հայաստանը վավերացրել է 2010թ.-ին, սահմանում է, մասնավորապես, որ անդամ պետությունները պարտավոր են ապահովել, որ «ընտրությունների ընթացակարգերը, շենքերը և նյութերը մատչելի, հասկանալի ու օգտագործելի լինեն» հաշմանդամ ընտրողների համար (հոդված 29):

Ուսումնասիրելու համար Հայաստանում այս խնդրի իրավիճակը, արդյունավետ լուծումներ գտնելու և հաշմանդամների ընտրական իրավունքի լիարժեք իրացմանը նպաստելու նպատակով, «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը պարբերաբար իրականացնում է ընտրատեղամասերի մատչելիության մոնիտորինգ (2003թ.-ից) և ընտրությունների դիտորդություն (2007թ.-ից):

2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում մոնիտորինգը և դիտորդությունը իրականացվել են Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ:

Դիտարկումների հիմնական նպատակն էր գնահատել ընտրատեղամասերի ֆիզիկական մատչելիությունը սակավաշարժուն ընտրողների, հատկապես սայլակով տեղաշարժվողների համար, հայտնաբերել, արդյոք ապահովված է լսողության խնդիրներ

ունեցող ընտրողների իրազեկությունը քարոզարշավին, ինչպես նաև պարզել տեսողության խնդիրներ ունեցող անձանց քվեարկության համար անհրաժեշտ պայմանների ապահովման աստիճանը:

Հետազոտությունը իրականացվել է Երևան քաղաքում երկու հիմնական փուլերով: Նախքան ընտրությունները «Ունիսոնի» դիտորդները գնահատել են ընտրատեղամասերի ընդհանուր ճարտարապետական պայմանները. մասնավորապես, դիտարկվել են տեղամասի փողոցում կամ բակում գտնվող խոչընդոտները, որոնք կարող են խանգարել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց՝ բորդյուրներ, աստիճաններ, ճանապարհի անհարթություններ: Ուսումնասիրվել են տեղամասի մուտքի մոտ առկա խնդիրները՝ առանց թեքահարթակի աստիճաններ կամ դժվարամատչելի (սահմանված չափանիշներին չհամապատասխանող) թեքահարթակներ, մուտքի նեղ դռներ: Այնուհետև գնահատվել է ընտրատեղամասի ներսում առկա իրավիճակը. ո՞ր հարկում է գտնվում տեղամասը, կա՞ն արդյոք աստիճաններ, առկա՞ են թեքահարթակներ, թե՞ ոչ: Այս բոլոր կետերի համադրության հիման վրա գնահատվել է ընտրատեղամասի մատչելիությունը: Բոլոր դիտարկված տեղամասերը պայմանականորեն բաժանվել են 4 կարգի՝ մատչելի, հիմնականում մատչելի, դժվարամատչելի և անմատչելի (մոնիտորինգի դիտարկման քարտը տե՛ս հավելված 1-ում):

Հետազոտության առաջին փուլում դիտարկվել է մայրաքաղաքի ընտրատեղամասերի գրեթե 100%-ը (470-ից 467-ը): Բացառություն են կազմել քրեակատարողական հիմնարկներում գտնվող երեք ընտրատեղամասերը, որոնց ուսումնասիրությունը համարվել է ոչ նպատակահարմար:

Ուսումնասիրված ընտրատեղամասերի 75%-ը չունեն խոչընդոտներ փողոցում կամ բակում: Մնացած դեպքերում տեղամասերի բակերում հայտնաբերվել են բորդյուրներ կամ աստիճաններ, ընդ որում հայտնաբերված 55 բորդյուրներից միայն 2-ն ունեն թեքահարթակներ, որոնցից միայն մեկն է համապատասխանում մատչելիության չափանիշներին, այսինքն իսկապես հասանելի է անվասայլակով ընտրողներին: Բացի այդ, բակում հանդիպող խոչընդոտներից են նաև աստիճանները: Նման խոչընդոտ հայտնաբերվել է 48 (11%) ընտրատեղամասում, դրանցից 3%-ում առկա են թեքահարթակներ, որոնցից, սակայն, ոչ մեկը չի համապատասխանում մատչելիության չափանիշներին: Բացի այդ, աստիճանների միայն 12% (6 տեղամաս) ունի բազրիքներ: Բազրիքների բացակայությունը խնդիրներ է ստեղծում ոչ միայն հաշմանդամների, այլև տեղաշարժման դժվարություններ ունեցող այլ մարդկանց՝ հղիների, տարեցների, մանկական սայլակով ծնողների համար: Ընտրատեղամասերի 6%-ի (30

ընտրատեղամաս) բակերում առկա են նաև այլ խոչընդոտներ, ինչպիսիք են անհարթ ճանապարհը կամ դարպասի բարձր շեմը:

467 ընտրատեղամասերից 403-ի (86%) մուտքի մոտ առկա են աստիճաններ: Ընդ որում, 24%-ն ունի թեքահարթակ, սակայն այդ թեքահարթակների ընդամենը 2%-ն է կիրառելի անվասայլակներով մարդկանց համար: Մուտքի մոտ աստիճան ունեցող ընտրատեղամասերի 54%-ի դեպքում հնարավոր է թեքահարթակ կառուցել՝ դարձնելով դրանք մատչելի:

Տեղամասերից 356-ը (69%) ունի երկփեղկանի դուռ, իսկ մեկփեղկանի դուռ ունեցող տեղամասերի 93%-ը ունի 70սմ և ավելի լայնություն, որը մատչելի է անվասայլակներով ընտրողներին:

Հետազոտված 467 տեղամասերից 381 (82%)-ը գտնվում է առաջին հարկում, սակայն այդ տեղամասերի 22%-ում առկա են զանազան խոչընդոտներ, ինչպիսիք են աստիճանները կամ բարձր շեմը: Առաջին հարկում խոչընդոտեր ունեցող ընտրատեղամասերի 6%-ն ունի թեքահարթակ:

Ընտրատեղամասերից 76-ը գտնվում է 2-րդ կամ ավելի բարձր հարկում, ընդ որում դրանցից 36%-ը հնարավոր է տեղափոխել առաջին հարկ՝ դարձնելով նշյալ տեղամասերն առավել հասանելի: Մնացած դեպքերում դա հնարավոր չէ անել տարածքի բացակայության կամ այլ ընտրատեղամասի գտնվելու պատճառով (ընտրատեղամասերում առկա խոչընդոտների վերաբերյալ թվային տեղեկությունները տե՛ս հավելված 3-ում):

Ընդհանրացնելով արդյունքները, կարող ենք փաստել, որ Երևան քաղաքի ընտրատեղամասերից 31-ը (6%) լիովին մատչելի են անվասայլակներով ընտրողների համար: Եվս 44 (9%) ընտրատեղամաս գնահատվել է որպես հիմնականում մատչելի, այսինքն անվասայլակներով ընտրողների մուտքը հնարավոր է աննշան օգնությամբ: Հաշմանդամների համար այս ընտրատեղամասերի մատչելիությունը մատնանշելու համար «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը այդ վայրերում փակցրել է հատուկ նշաններ. կանաչ՝ լիովին մատչելի և կապույտ՝ հիմնականում մատչելի ընտրատեղամասերում: (Նշված ընտրատեղամասերի ցուցակը տե՛ս հավելված 2-ում)

Հետազոտության երկրորդ փուլը իրականացվում էր անմիջապես ընտրությունների օրը: «Ունիսոնի» դիտորդների հիմնական նպատակներն էին՝ բացահայտել, որքանով են քվեախցիկները հարմար անվասայլակներով ընտրողների համար (անկախ նրանից, եղել են նման ընտրողներ, թե ոչ), առկա են արդյոք ընտրատեղամասերում թույլ տեսնող անձանց համար նախատեսված ոսպնյակներ և կույր ընտրողների համար նախատեսված կաղապարներ, ի հայտ բերել ընտրատատեղամասերի ֆիզիկական մատչելիության հետ

կապված այլ խնդիրներ: Նշված նպատակներին հասնելու համար քվեարկության օրը դիտարկվել է Երևան քաղաքի ընտրատեղամասերի 70%-ը (դիտարկման քարտը տե՛ս հավելված 4-ում):

Փետրվարի 18-ին՝ նախագահական ընտրությունների ընթացքում, «Ունիսոնի» դիտորդները արձանագրել են հետևյալ տվյալները. դիտարկվել է 291 տեղամաս, գրեթե բոլոր ընտրատեղամասերում առկա էին տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար նախատեսված ոսպնյակները, որոնք բավականին բարձր կիրառելիություն են ունեցել: Առկա էին նաև կույր ընտրողների համար նախատեսված կաղապարները, որոնցից, սակայն, օգտվել են եզակի քաղաքացիներ: Բացառություն է կազմել 1 ընտրատեղամաս, որտեղ հավաստիացրեցին, որ իրենց կաղապար չի տրվել (10/24, հասցե՝ Ժուռնալիստների տուն, Պուշկինի 3ա): Ընտրատեղամասերից մեկում (6/4, հասցե՝ թիվ 126 դպրոց, Էստոնական 8ա) տեղամասային հանձնաժողովի թողտվությամբ վստահված անձը հորդորում էր վատ տեսնող ընտրողներին չօգտվել ոսպնյակից՝ մեկնաբանելով, որ դա անիմաստ է, և առաջարկում էր իր կողմից ներկայացված մարդկանց օգնություն: Այս պարագայում լիովին չի օգտագործվել անձի՝ ինքնուրույն ընտրություն կատարելու հնարավորությունը:

Ընդամենը 37 ընտրատեղամասում անվասայլակներով մարդկանց համար քվեախուցը անհասանելի էր նեղ տարածության պատճառով, ևս 120 ընտրատեղամասում քվեախցիկին մոտենալ թեև հնարավոր էր, սակայն դժվարությամբ (կողքով): Որոշ ընտրատեղամասերում տեղավադրվել են շարժական թեքահարթակներ, սակայն դրանցից միայն երկուսն են համապատասխանում չափանիշներին, այսինքն՝ իսկապես կիրառելի են անվասայլակներով ընտրողների համար (6/34, թիվ 22 դպրոց, հասցե՝ Նազարբեկյան թաղամաս, 3/22, թիվ 48 դպրոց, հասցե՝ Դրոյի 11): Մնացած դեպքերում շարժական թեքահարթակները սահմանված չափանիշներից կարճ են, հետևաբար ունեն մեծ թեքություն, որը անհարմար է (որոշ դեպքերում անգամ վտանգավոր) անվասայլակով տեղաշարժվելու համար:

Նախընտրական քարոզարշավի դիտարկումները ցույց են տվել լսողության խնդիրներ ունեցող ընտրողների կարիքների անտեսում. նախագահի թեկնածուների հեռուստաքարոզարշավը չէր զուգորդվում սուրդոթարգմանությամբ, ինչը խախտում է խուլ ընտրողների տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Գնահատելով ընտրատեղամասերի ֆիզիկական մատչելիության առկա իրավիճակը, զուգահեռներ անցկացնենք 10 տարի առաջ իրականացված նմանատիպ հետազոտության հետ: 2003թ. համապետական ընտրությունների ընթացքում ուսումնասիրված 419 տեղամասերից միայն 10-ն (2%) են գնահատվել որպես լիովին մատչելի. համեմատելով 2013թ. մոնիտորինգի

արդյունքների հետ՝ 4%-անոց աճ ենք նկատում: Մատչելիության չափանիշներին համապա-տասխանող ընտրատեղամասերի քանակի աճը վկայում է որոշում կայացնողների և հանրային գիտակցության մեջ նշված հիմնախնդրի նշանակալիության բարձրացման մասին: Այս նվաճման մեջ կարևոր ենք համարում նաև նման մոնիտորինգների իրականացումը և դրանց հիման վրա մշակված առաջարկությունները: Սակայն, արձանագրված առաջընթացը և բարեփոխումների տեմպերը բավարար չեն հաշմանդամություն ունեցող քաղաքացիների ընտրական իրավունքի լիակատար իրացման համար:

## Գլուխ 2. Ընտրությունների մատչելիության ապահովմանն ուղղված հանձնարարականներ և առաջարկներ

**Վատ տեսնող և չտեսնող ընտրողների իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված հանձնարարականներ և առաջարկներ**

1) Ավելի լայնորեն իրազեկել վատ տեսնող ընտրողներին ընտրատեղամասերում առկա ոսպնյակների մասին
2) Բացառել ընտրական գործընթացի մասնակիցների կողմից ոսպնյակից չօգտվելու հորդորները
3) Ապահովել, որ բոլոր ընտրատեղամասերում առկա լինի չտեսնող ընտրողների համար նախատեսված հատուկ կաղապարը
4) Ավելի լայնորեն իրազեկել չտեսնող ընտրողներին հատուկ կաղապարի առկայության և կիրառելիության մասին

**Խուլ ընտրողների իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված առաջարկ**

Հեռուստաքարոզարշավի ժամանակ սուրդոթարգմանությամբ զուգորդել քաղաքական գովազդը

**Երևան քաղաքի ընտրատեղամասերի ֆիզիկական մատչելիության բարձրացմանն ուղղված հանձնարարականներ և առաջարկներ**

| *Խումբ 1. Ընտրատեղամասեր, որտեղ, չնայած անհրաժեշտությանը, բացակայում է թեքահարթակը կամ առկա է, սակայն ակնհայտորեն չի համապատասխանում նորմատիվներին, հետևաբար, առավել հրատապ են վերակառուցման տեսանկյունից (38 ընտրատեղամաս)* | | | |
|---|---|---|---|
| Ընտրա-տեղամասի թիվ | Հասցե | Խոչընդոտների նկարագրություն | Առաջարկ |
| 1/14 | Թիվ 170 դպրոց, Թումանյան թաղ. 3 | Շենքի մուտքի մոտ առկա է 9սմ բարձրությամբ 1 աստիճան, որի վրա կառուցված է ոչ բավարար՝ 0.3մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 0.3մ-ի փոխարեն դարձնելով 0.9մ: |
| 1/25 | Թիվ 9/104/ ՆՈՒՀ, Գայի 5/1 | 1 հարկում առկա է 8սմ բարձրությամբ շեմ: | Չեզոքացնել մուտքի մոտ առկա շեմը |
| 2/6 | Թիվ 150 դպրոց, Բակունցի 6 | Շենքի մուտքի մոտ առկա է՝ 6 աստիճան, յուրաքանչյուրը 14սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 5մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝5մ-ի փոխարեն դարձնելով 8.4մ: |
| 4/17 | Երևան քաղաքի թիվ 7 սպորտդպրոց, Կոմիտաս 37 | Շենքի մուտքի մոտ առկա է 4 աստիճան, յուրաքանչյուրը՝13սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 0.8մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 0.8մ-ի փոխարեն դարձնելով 5.2մ: |
| 4/19 | Իսակովի անվան թիվ 132 դպրոց, Ա. Խաչատրյան 28 | Շենքի մուտքի մոտ առկա է 5 աստիճան, յուրաքանչյուրը՝13սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 2մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 2մ-ի փոխարեն դարձնելով 6.5մ: |
| 4/21 | «Հայերկրաբան» Ա/Մ կենտրոն, լաբ., Կոմիտաս 29 | Շենքի մուտքի մոտ առկա է 3 աստիճան, յուրաքանչյուրը՝15սմ երկարությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝2մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 2մ-ի փոխարեն դարձնելով 4.5մ: |

| | | | |
|---|---|---|---|
| 4/23 | Գայի անվան թիվ 129 դպրոց, Հր. Քոչարի 29 | Շենքի մուտքի մոտ առկա է 8 աստիճան, յուրաքանչյուրը՝ 13 սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար `4մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 4մ-ից դարձնելով 10.4մ: |
| 4/25 | Թիվ 26 մ/մանկապարտեզ, Վ.Փափազյան 8 | Շենքի մուտքի մոտ առկա է 20սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել առնվազն 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 4/26 | Արվեստանոցին կից տարածք, Աղբյուր Սերոբ 7 | Շենքի մուտքի մոտ առկա է 10սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 4/34 | Թիվ 78 դպրոց, Բաղրամյան 59 | Շենքի մուտքի մոտ առկա է 5 աստիճան, յուրաքանչյուրը՝ 13սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 1.5մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 1.5մ-ից դարձնելով 6.5մ: |
| 5/13 և 5/14 | Թիվ 172 մ/ մանկ. /59 ՆՈՒՀ/, Դավթաշեն 2 թաղ. | Շենքի մուտքի մոտ առկա է 10սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 5/37 | «Հայգյուղշիննախ» ինստ., Կիևյան 16 | Բակում առկա է 14սմ բարձրությամբ բորդյուր: | Չեզոքացնել բակում առկա բորդյուրը: |
| 6/1 և 6/2 | Թիվ 131 դպրոց, Արզումանյան 22 | Բակում ճանապարհն անհարթ է, շենքի մուտքի մոտ առկա է 15սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել ճանապարհը: Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել առնվազն 1.5մ երկարությամբ թեքահարթակ: |
| 7/26 | Թիվ 89 դպրոց, Սեբաստիա 19 | Բակում առկա է 12սմ բարձրությամբ բորդյուր, շենքի մոտ՝ 2 աստիճան, յուրաքանչյուրը՝ 6սմ բարձրությամբ: | Չեզոքացնել բակում առկա բորդյուրը, մուտքի մոտ գտնվող աստիճանների համար կառուցել 1.2մ երկարությամբ թեքահարթակ: |
| 7/27 և 7/28 | Թիվ 111 դպրոց, Լուկաշինի 1 | Դարպասի մոտ առկա է 15սմ բարձրությամբ բորդյուր, շենքի մուտքի մոտ՝ 10սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա բորդյուրը կամ կառուցել առնվազն 1.5մ երկարությամբ թեքահարթակ: Հարթեցնել շենքի մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել առնվազն 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 8/8 և 8/9 | Թիվ 179 դպրոց, Ա-3 թ. Օհանով 72 | Մուտքի մոտ առկա է 6 աստիճան, յուրաքանչյուրը՝ 14սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 4.3մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը 4.3մ-ից դարձնելով 8.4մ: |
| 9/14 | Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 դպրոց, Բուզանդ 107 | Մուտքի մոտ առկա է 9սմ բարձրությամբ շեմ: | Չեզոքացնել մուտքի մոտ առկա շեմը: |
| 9/15 | Արեգնազան կրթահամալիր, Սարյան 23 | Բակում առկա է 15սմ բարձրությամբ բորդյուր: | Հարթեցնել բակում առկա բորդյուրը կամ կառուցել 1.5մ երկարությամբ թեքահարթակ: |
| 9/19 | Չարենցի անվան թիվ 67 դպրոց, Ամիրյան 9 | Շենքի մուտքի մոտ առկա է 17սմ բարձրությամբ մեկ աստիճան, դրան շեմն ունի 4սմ բարձրություն: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը, վերացնել շեմը: |
| 9/26 | Վ. Վաղարշյանի անվան 80 դպրոց, Ծ. Իսակովի 2/1 | Շենքի մուտքի մոտ առկա է 7սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը: |
| 9/27 և 9/28 | Հիդրոպոնիկայի պրոբլ. ինստիտուտ, Նորագյուղ 108 | Շենքի մուտքի մոտ առկա է 7 սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել շենքի մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 0.7մ երկարությամբ թեքահարթակ: |

| | | | |
|---|---|---|---|
| 11/2 | Թիվ 32 դպրոց, Սևանի 32 | Շենքի մուտքի մոտ առկա է 2 աստիճան, յուրաքանչյուրը 15 սմ բարձրությամբ: | Հարթեցնել մուտքի մոտ առկա 2 աստիճանները կամ կառուցել 2մ երկարությամբ թեքահարթակ: |
| 11/15 | Թիվ 32 դպրոց, Սևանի 32 | Մուտքի մոտ առկա է 3 աստիճան, յուրաքանչյուրը՝ 15սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 1.15մ երկարությամբ թեքահարթակ: Դռան մուտքի մոտ առկա է 15սմ բարձրությամբ շեմ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 1.15մ-ից դարձնելով 4.5մ, չեզոքացնել մուտքի մոտ առկա շեմը: |
| 12/29 | Թիվ 160 դպրոց, Ավանեսովի 10 | Շենքի մուտքի մոտ առկա է 2 աստիճան, յուրաքանչյուրը՝ 14սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 1.2մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել թեքահարթակը՝ 1.2մ-ից դարձնելով 2մ: |
| 12/34 և 12/37 | Ն.Խարբերդ 4 փ., 2 հողակտոր | Շենքի մուտքի մոտ առկա է 15սմ բարձրությամբ 1 աստիճան, դրան մոտ՝ 20սմ բարձրությամբ շեմ: | Մուտքի մոտ կառուցել թեքահարթակ՝ առնվազն 1.5մ երկարությամբ: Չեզոքազնել շեմը: |
| 12/38 | Արշակունյաց 135/7, 5 հարկանի շենքի 1-ին հարկ | Շենքի մուտքի մոտ առկա է 7սմ բարձրությամբ շեմ: | Չեզոքացնել մուտքի մոտ առկա շեմը: |
| 13/22 և 13/23 | Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, Էրեբունու 15 | Շենքի մուտքի մոտ առկա է 15սմ բարձրությամբ 1 աստիճան: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 0.4մ-ից դարձնելով 1.5մ: |
| 13/28 | Թիվ 70 մանկապարտեզ, Վարդաշենի 6փ, 80 | Շենքի մուտքի մոտ առկա է ՝18սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 1.8մ երկարությամբ թեքահարթակ: |
| 13/29 | Թիվ 101 դպրոց, Մուշական թաղ. | Շենքի մուտքի մոտ առկա է 10սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 13/31 | Էրեբունու 31, Էրեբունի փ. 31 | Բակում առկա է 15սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել բակում առկա աստիճանը կամ կառուցել առնվազն 1.5մ երկարությամբ թեքահարթակ: |
| 13/34 | Թիվ 125 մանկապարտեզ, Նուբարաշեն 12փ. 1 | Բակում առկա է 8սմ բարձրությամբ բորդյուր: | Հարթեցնել բակում առկա բորդյուրը կամ կառուցել 0.8մ երկարությամբ թեքահարթակ: |

*Խումբ 2. Ընտրատեղամասեր, որտեղ առկա թեքահարթակների կառուցման մեջ թեև նկատվում են նորմատիվներից շեղումներ, սակայն ոչ նշանակալի: Այս ընտրատեղամասերի վերակառուցումը թեև ցանկալի է, բայց ոչ հրատապ (6 ընտրատեղամաս)*

| Ընտրա-տեղամաս թիվ | Հասցե | Խոչընդոտների նկարագրություն | Առաջարկություն |
|---|---|---|---|
| 1/35 | Առնտրի քոլեջ, Մոլդովական 37ա | Շենքի մուտքի մոտ առկա է 4 աստի-ճան, յուրաքանչյուրը՝ 15սմ բարձրու-թյամբ: Աստիճանների վրա կառուց-ված է ոչ բավարար՝ 5մ երկարու-թյամբ թեքահարթակ: Մուտքի դուռը ունի 5սմ բարձրությամբ շեմ: | Վերակառուցել թեքահարթակը՝ 5մ-ի փոխարեն դարձնելով 6մ, չեզոքացնել շեմը: |
| 3/18 | Թիվ 125 դպրոց, Պ. Սևակի 89 | Բակում առկա է 3 աստիճան, յուրաքանչյուրը՝ 5սմ բարձրությամբ, որոնց վրա կառուցված է ոչ բավա- | Վերակառուցել բակում առկա թեքահարթակը՝ 1մ փոխարեն դարձնելով 1.5մ, կատարելագործել |

| | | | |
|---|---|---|---|
| | | բար՝ 1մ երկարությամբ թեքահարթակ: Շենքի մուտքի մոտ առկա է 3 աստիճան, յուրաքանյուրը՝ 8սմ բարձրությամբ, որոնց վրա կառուցված է ոչ բավարար՝ 2մ երկարությամբ թեքահարթակ: | շենքի մուտքի մոտ առկա թեքահարթակը 2մ-ի փոխարեն դարձնելով 2.4մ: |
| 4/22 | Թիվ 29 մսուր-մանկապարտեզ, Կոմիտաս 30 | Բակում առկա 10սմ բարձրությամբ 1 աստիճան: | Հարթեցնել մուտքի մոտ առկա աստիճանը կամ կառուցել 1մ երկարությամբ թեքահարթակ: |
| 8/33 | Թիվ 144 դպրոց, Վ. Շենգավիթ 2փ. 9 | Շենքի մուտքի մոտ առկա է 3 աստիճան, յուրաքանչյուրը՝ 15սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 1.4մ երկարությամբ թեքահարթակ: | Վերակառուցել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 1.4մ-ից դարձնելով 4.5մ: |
| 9/32 | Թիվ 122 դպրոց, Արզումանյան 5 | Բակում ճանապարհին անհարթ է, շենքի մուտքի մոտ առկա է 11սմ բարձրությամբ շեմ: Շենքի մուտքի մոտ առկա 4 աստիճան, յուրաքանչյուրը 15սմ բարձրությամբ: Աստիճանների վրա կառուցված է ոչ բավարար՝ 4.7մ բարձրությամբ թեքահարթակ: | Հարթեցնել բակի ճանապարհը, վերացնել մուտքի շեմը, կատարելագործել մուտքի մոտ առկա թեքահարթակը՝ 4,7մից դարձնելով 6մ: |
| 11/13 | Ա.Բակունցի անվան քոլեջ, Նժդեհի 20 | Բակում առկա է 25սմ բարձրությամբ 1 աստիճան, շենքի մուտքի մոտ՝ 2 աստիճան, յուրաքանչյուրը՝ 15սմ բարձրությամբ: | Հարթեցնել բակում և շենքի մուտքի մոտ առկա աստիճանները կամ կառուցել թեքահարթակներ: |

| *Տեղամասեր, որոնք մատչելի կլինեն առաջին հարկ տեղափոխելու շնորհիվ* | |
|---|---|
| 13/13 | Թիվ 17 դպրոց, Սասունցի Դավթի 78 |

| *Տեղամասեր, որոնք մատչելի կլինեն առաջին հարկ տեղափոխելու և շենքի մուտքի մոտ առկա թեքահարթակը վերակառուցելու դեպքում* | |
|---|---|
| 4/16 | Թիվ 22 մանկապարտեզ, Գրիբոյեդով 2/2 |
| 7/35 | Թիվ 11 դպրոց, Բ-2 թաղ., Բաբաջանյան 137 |
| 11/36 | Թիվ 49 դպրոց, Ն. Արեշ 5փ. 2 |
| 11/37 | Թիվ 49 դպրոց, Ն. Արեշ 5փ. 2 |

| *Տեղամասեր, որոնք գտնվում են առաջին հարկում և մատչելի կլինեն շենքի մուտքի մոտ թեքահարթակի կառուցման դեպքում* | |
|---|---|
| 1/2 | Թիվ 51 մ/մանկապարտեզ, Ավան 6փ., 52/1 |
| 1/5 | Թիվ 104 դպրոց, Աճառյան 5 |
| 1/6 | Ներսես Մեծի անվան թիվ 124 դպրոց, Աճառյան 15 |
| 1/15 | Թիվ 171 դպրոց, Իսահակյան թաղ. |
| 1/16 | Թիվ 52 մ/մանկապարտեզ, Իսահակյան թաղ. |
| 1/22 | Թիվ 96 դպրոց, Դ. Մալյան 24 |
| 1/24 | Թիվ 8/103/ ՆՈՒՀ, Թոթովենցի 9 |
| 1/26 | Թիվ 164 դպրոց, Թոթովենցի 7 |
| 1/34 | Թիվ 133 դպրոց, Մոլդովական 35 |
| 2/4 | Ասլամազյանի անվան երաժշտական դպրոց, Գյուլիքևխյան 6 |
| 2/11 | Թիվ 187 դպրոց, 1-ին տեղամաս, Ջրվեժ, Մայակ թաղ. |
| 2/15 | Թիվ 17 /112/ ՆՈՒՀ, Մառի 9 |
| 2/18 | Շիրակացու անվան թիվ 18 ՆՈՒՀ, Գալշոյան |

| | |
|---|---|
| 2/21 | Թիվ 163 դպրոց, 1-ին տեղամաս, Գյուրջյան 13 |
| 2/22 | Թիվ 163 դպրոց, 2-րդ տեղամաս, Գյուրջյան 13 |
| 2/24 | Թիվ 88 դպրոց, 1-ին տեղամաս, Կարախանյան 11 |
| 2/28 | «Անի» մանկապարտեզ, Ն/Ն 8-րդ զ. |
| 3/8 | Թիվ 103 դպրոց, Զ. Քանաքեռցու 14 |
| 4/13 | Ռ. Սևակի անվան թիվ 151 դպրոց, Բաբայան 40 |
| 4/24 | Թիվ 26 մ/մանկապարտեզ, Վ. Փափազյան 8 |
| 4/27 | Մ. Գաշյանի անվան թիվ 148 դպրոց, Սունդուկյան 78 |
| 4/29 | Հայջրնախագիծ ինստիտուտ, Վ. Վաղարշյան 12 |
| 4/30 | Արվեստանոց, Աղբյուր Սերոբ 7 |
| 5/1 | Թիվ 93 դպրոց, Դավթաշեն գյուղ |
| 5/4 | Թիվ 312 մ/մանկ. /61 ՆՈՒՀ/, Դավթաշեն 1 թաղ. |
| 5/5 | Թիվ 146 մ/մանկ. /58 ՆՈՒՀ/, Դավթաշեն 1 թաղ. |
| 5/7 | Թիվ 189 դպրոց, Դավթաշեն 1 թաղ. |
| 5/8 | Թիվ 219 մ/մանկ. /60 ՆՈՒՀ/, Դավթաշեն 3 թաղ. |
| 5/9 | Թիվ 219 մ/մանկ. /60 ՆՈՒՀ/, Դավթաշեն 3 թաղ. |
| 5/10 | Թիվ 219 մ/մանկ. /60 ՆՈՒՀ/, Դավթաշեն 3 թաղ. |
| 5/15 | Թիվ 199 դպրոց, Դավթաշեն 4 թաղ. |
| 5/16 | Թիվ 199 դպրոց, Դավթաշեն 4 թաղ. |
| 5/22 | Հեքիմյանի անվան թիվ 13 երաժշտական դպրոց, Վ. Վաղարշյան 24/17 |
| 5/34 | Թիվ 27 մ/մանկապարտեզ, Կիևյան 7 |
| 6/31 | Թիվ 195 դպրոց, Մազմանյան 5ա |
| 7/7 | Թիվ 190 դպրոց, Բ-2թ. Բաբաջանյան 127/1 |
| 7/16 | Թիվ 113 դպրոց, Հաղթանական 6փ. 51 |
| 7/23 | Թիվ 121 դպրոց, Տիչինա 1, նրբ. 1 |
| 7/29 | Թիվ 146 դպրոց, Լուկաշին 6 |
| 7/30 | Թիվ 146 դպրոց, Լուկաշին 6 |
| 7/32 | Թիվ 108 դպրոց, Սիլիկյան 10 |
| 7/33 | Թիվ 108 դպրոց, Սիլիկյան 10 |
| 8/1 | Թիվ 152 դպրոց, Արարատյան 1զ. Կուրղինյան 9 |
| 8/2 | Թիվ 152 դպրոց, Արարատյան 1զ. Կուրղինյան 9 |
| 8/23 | Թիվ 191 դպրոց, Բ-3 թ. Անդրանիկի 73 |
| 8/25 | Թիվ 112 դպրոց, Ախպարաշեն, Սեբաստիա 84 |
| 8/26 | Թիվ 112 դպրոց, Ախպարաշեն, Սեբաստիա 84 |
| 8/27 | Թիվ 91 դպրոց, Ախպարաշեն, Ծերենցի 72 |
| 8/28 | Թիվ 91 դպրոց, Ախպարաշեն, Ծերենցի 72 |
| 8/29 | Թիվ 91 դպրոց, Ախպարաշեն, Ծերենցի 72 |
| 10/18 | Ն.Ստեփանյանի անվան թիվ 71 դպրոց, Հանրապետության 72 |
| 10/22 | Մանկավարժական ինստ. բանասիրական ֆակ., Ալեք Մանուկյան 13 |
| 10/26 | Պուշկինի անվան թիվ 8 դպրոց, Մոսկովյան 17 |
| 10/32 | Թոթովենցի անվան թիվ 57 դպրոց, Ագաթանգեղոսի 7ա |
| 11/9 | Թիվ 35 դպրոց, Էրեբունու 16 |
| 11/18 | Թիվ 154 դպրոց, Ֆրունզե 4 |
| 11/23 | Կինոտեխ. Շ-Մշակ. Քոլեջ, Բագրատունյաց 37 |
| 11/27 | Թիվ 110 դպրոց, Ս.Տարոնցի 11 |
| 11/28 | Թիվ 110 դպրոց, Ս.Տարոնցի 11 |

| | |
|---|---|
| 11/29 | Թիվ 69 դպրոց, Արարատյան 26 |
| 11/34 | Թիվ 75 դպրոց, Ն.Շենգավիթ 12փ., 13 |
| 11/35 | Թիվ 137 դպրոց, Ս.Տարոնցի 17 |
| 12/7 | Թիվ 173 դպրոց, Հ.Հովսեփյան 4 |
| 12/14 | Թիվ 158 դպրոց, Շիրակի 2 նրբ. 5 |
| 12/10 | Թիվ 140 դպրոց, Նորագավիթ 1փ. 99 |
| 12/11 | Թիվ 140 դպրոց, Նորագավիթ 1փ. 99 |
| 12/12 | Թիվ 98 դպրոց, Նորագավիթ 1փ., 97 |
| 12/26 | Թիվ 98 դպրոց, Նորագավիթ 1փ., 97 |
| 12/30 | Թիվ 72 մանկապարտեզ, Խաղաղ Դոնի 21 |
| 12/33 | Թիվ 178 դպրոց, Խաղաղ Դոնի 25 |
| 12/35 | Թիվ 158 դպրոց, Շիրակի 2 նրբ. 5 |
| 13/5 | Թիվ 70 դպրոց, Սարի թաղի 3փ., 44 |
| 13/7 | Թիվ 66 ՆՈՒՀ, Սարի թաղի 7փ., 15 |
| 13/11 | Թիվ 16 դպրոց, Բունիաթյան 37 |
| 13/17 | Թիվ 43 դպրոց, Ն.Արեշ 9փ., 54 |
| 13/24 | Չուխաջյան երաժշ. դպրոց, Ռոստոմյան 23 |

| *Տեղամասեր, որոնք հարթ մուտք ունեն և կարող են մատչելի դառնալ առաջին հարկում թեքահարթակի կառուցման դեպքում* | |
|---|---|
| 6/30 | Թիվ 49 ՆՈՒՀ, 16 թաղ. |
| 8/3 | Թիվ 116 դպրոց, Արարատյան 2զ. Կուրղինյան նրբ. 1 |
| 8/4 | Թիվ 116 դպրոց, Արարատյան 2զ. Կուրղինյան նրբ. 1 |

| *Տեղամասեր, որոնք կարող են առաջին հարկ տեղափոխվել և մատչելի կլինեն մուտքի մոտ թեքահարթակի կառուցման դեպքում* | |
|---|---|
| 1/32 | Թիվ 139 դպրոց, 1-ին տեղամաս, Ստեփանյան 3 |
| 7/2 | Թիվ 78 ՆՈՒՀ, Բ-2թ. Բաբաջանյան 139 |
| 7/24 | Թիվ 121 դպրոց, Տիչինա 1, նրբ. 1 |
| 11/1 | Կաշվե գործ. Ակումբ, Կույբիշևի 18 |
| 13/30 | Թիվ 107 դպրոց, Ջրաշեն թաղ. 1փ. |

| *Տեղամասեր, որոնք կարող են մատչելի դառնալ մուտքի մոտ և առաջին հարկում թեքահարթակների կառուցման դեպքում* | |
|---|---|
| 1/1 | Թիվ 51 մ/մանկապարտեզ, Ավան 6փ., 52/1 |
| 2/7 | Թիվ 142 դպրոց, Գյուլիքևխյան 33 |
| 5/17 | Թիվ 22 երաժշտական դպրոց /Ա. Բ. Տերտերյանի անվան արվեստի դպրոց/, Դավթաշեն 4-րդ թաղ. |
| 5/23 | Հեքիմյանի անվան թիվ 13 երաժշտական դպրոց, Վ. Վաղարշյան 24/17 |
| 5/32 | Թիվ 145 դպրոց, Էմինի 8 |
| 8/30 | Թիվ 50 դպրոց, Շչենկո 34 |
| 8/31 | Թիվ 50 դպրոց, Շչենկո 34 |
| 10/30 | Չեխովի անվան թիվ 55 դպրոց, Բաղրամյան 16 |
| 13/9 | Թիվ 120 դպրոց, Խորենացու 207 |
| 13/10 | Թիվ 120 դպրոց, Խորենացու 207 |
| 13/26 | Հաստոցանորմալ գործարան, Գ.Մահարու 1 |
| 13/27 | Թիվ 64 դպրոց, Վարդաշենի 3փ., 3 |
| 13/37 | Թիվ 175 դպրոց, Նուբարաշեն 11 փ., 2 |

## 2013թ. Նախագահական ընտրությունների դիտարկման քարտ (մոնիտորինգ)__________

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ընտրատեղամաս թիվ ________ դպրոց թիվ _____ մ/մ թիվ _____ այլ _________________________________
2. Հասցե՝ _______________________________________________________hեռախոս՝ ______________________

Բ. ՓՈՂՈՑԸ / ԲԱԿԸ

3. բորդյուր
   *1) կա, բարձրությունը ______ սմ 2) չկա (անցնել հարց 5-ին)*
4. բորդյուրի թեքահարթակ
   *1) կա______սմ երկարությամբ*
   *2) չկա*
5. աստիճաններ *1) կան___ հատ, մեկ աստիճանի բարձրությունը ______ սմ 2) չկան (անցնել հարց 8-ին)*
6. բազրիք աստիճանների մոտ *1) կա 2) չկա*
7. թեքահարթակ
   *1) կա______մետր երկարությամբ*
   *2) չկա*
8. այլ խոչընդոտներ (ոչ մատչելի դարպաս և այլն) _______________________________________________________

Գ. ՇԵՆՔԻ ՄՈՒՏՔԸ

9. աստիճաններ
   *1) կան___ հատ, մեկ աստիճանի բարձրությունը ______ սմ 2) չկան (անցնել հարց 12-ին)*
10. բազրիք աստիճանների մոտ
   *1) կա 2) չկա*
11. թեքահարթակ
   *1) կա______ մետր երկարությամբ ա) բազրիքով բ) առանց բազրիքի*
   *2) չկա, բայց հնարավոր է կառուցել*
   *3) չկա և հնարավոր չէ կառուցել*
12. այլ խոչընդոտներ (ծաղկաման և այլն) _________________________________________________________________

Դ. ՄՈՒՏՔԻ ԴՈՒՌԸ

13. փեղկերի քանակը
   *1) 1-փեղկանի 2) 2-փեղկանի, 2-րդ փեղկը բացվում է 3) 2-փեղկանի, 2-րդ փեղկը չի բացվում*
14. մեկ փեղկի լայնությունը _____ *սմ,* երկրորդ փեղկի լայնությունը _____ *սմ (*եթե տարբերվում է առաջինից)
15. այլ խոչընդոտներ (բարձր շեմ, 2-րդ դռան առկայությունը, լայնությունը և այլն) _________________________________

Ե. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԵՐՍՈՒՄ

16. Ընտրատեղամասը գտնվում է ա) 1-ին (անցնել հարց 18-ի) բ) 2-րդ գ) այլ ___________հարկում
17. Եթե տեղամասը չի գտնվում առաջին հարկում, ապա 1-ին հարկ տեղափոխելու դեպքում խոչընդոտներ
   *1) չեն լինի 2) կլինեն* ____________________________________________________________________________
18. աստիճաններ
   *1) կան___ հատ, մեկ աստիճանի բարձրությունը ______ սմ 2) չկան (անցնել հարց 21-ին)*
19. բազրիք աստիճանների մոտ
   *1) կա 2) չկա*
20. թեքահարթակ
   *1) կա______ մետր երկարությամբ ա) բազրիքով բ) առանց բազրիքի*
   *2) չկա, բայց հնարավոր է կառուցել*
   *3) չկա և հնարավոր չէ կառուցել*
21. այլ խոչընդոտներ ____________________________________________________________________

Զ. ՎԵՐԵԼԱԿ (լրացնել, եթե տեղամասը գտնվում է առաջինից բարձր հարկում)

22. վերելակ
   *1) կա, դռան լայնությունը _____ սմ 2) չկա (ավարտել)*
23. մինչև վերելակ աստիճաններ առանց թեքահարթակի
   *1) կան_____ հատ, մեկ աստիճանի բարձրությունը ______ սմ 2) չկան*

Լրացրեց_____________________________________________ (անուն, ազգանուն, ստորագրություն) ամսաթիվ __________

*Հավելված 2*

**Երևան քաղաքի մատչելի և հիմնականում մատչելի տեղամասերի ցանկ**

| ՄԱՏՉԵԼԻ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐ - 32 հատ (6.85%) | |
|---|---|
| Ընտրատեղամաս թիվ | Հասցե |
| 3/9 | Թիվ 160 ՆՈՒՀ ՀՈԱԿ, Հասրաթյան 14 |
| 3/6 | Թիվ 8 հատուկ դպրոց, Ծ.Աղբյուրի 14 |
| 3/3 | Թիվ 84 դպրոց, Քանաքեռ 14փ., 1 |
| 3/31 | Թիվ 117 դպրոց, Ֆանարջյան 15 |
| 3/28 | Թիվ 152 ՆՈՒՀ ՀՈԱԿ, Ազատության 4ա |
| 3/26 | Թիվ 59 դպրոց, Վարշավյան 45 |
| 3/35 | Թիվ 106 դպրոց, 1-ին տեղամաս, Նանսենի 11 |
| 3/36 | Թիվ 106 դպրոց, 1-ին տեղամաս, Նանսենի 11 |
| 8/18 | Արհեստագործական դպրոց, Բ-1 թաղ., Անդրանիկի 91/2 |
| 2/34 | Թիվ 197 դպրոց, 1-ին տեղամաս, Վիլնյուս 59/5 |
| 8/14 | Մ. Սեբաստացի կրթահամալիր, Բ-1 թ. Բաբաջանյան 37 |
| 8/15 | Մ. Սեբաստացի կրթահամալիր, Բ-1 թ. Բաբաջանյան 37 |
| 5/6 | Թիվ 200 դպրոց, Դավթաշեն 1 թաղ. |
| 5/20 | Վ. Բրյուսովի անվան ՊԼՀ հենակետային վարժարան, Էմինի 123 |
| 1/30 | Թիվ 135 դպրոց, 1-ին տեղամաս, Ստեփանյան 5 |
| 5/28 | «Դավիթ» առևտրի տուն, Հր. Քոչարի 4 |
| 1/21 | ՀՖՖ, Ակադեմիա, Աճառյան 35/31 |
| 1/8 | Թիվ 180 դպրոց, Ավան Առինջ թաղ. |
| 3/23 | Թիվ 147 դպրոց, Կ. Ուլնեցու 1 |
| 3/21 | Թիվ 1 արվեստի դպրոց, Դրոյի 4ա |
| 7/11 | Թիվ 184 դպրոց, Ա-1 թ., Սվաճյան 44 |
| 12/16 | Թիվ 52 դպրոց, Շիրակի 3 |
| 12/15 | Թիվ 52 դպրոց, Շիրակի 3 |
| 6/13 | Թիվ 100 դպրոց, Մարգարյան 9 |
| 6/14 | Թիվ 100 դպրոց, Մարգարյան 9 |
| 6/18 | Թիվ 155 դպրոց, Բաշինջաղյան 2 նրբ. 3 |
| 6/21 | Թիվ 168 դպրոց, Բաշինջաղյան 1 նրբ. |
| 6/22 | Թիվ 168 դպրոց, Բաշինջաղյան 1 նրբ. |
| 10/2 | «Օլիմպոս» կրթահամալիր, Գ. Հովսեփյան 6 |
| 13/12 | Թիվ 17 դպրոց, Սասունցի Դավթի 78 |
| 4/32 | Թիվ 172 դպրոց, Բաղրամյան 59 Ա |
| 3/22 | Թիվ 48 դպրոց, Դրոյի 11 |

| ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՄԱՏՉԵԼԻ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐ - 44 հատ (9.42%) | |
|---|---|
| Ընտրատեղամաս թիվ | Հասցե |
| 1/14 | Թիվ 170 դպրոց, Թումանյան թաղ. 3 |

| | |
|---|---|
| 1/25 | Թիվ 9/104/ ՆՈՒՀ, Գայի 5/1 |
| 1/35 | Առնտրի քոլեջ, Մոլդովական 37ա |
| 2/6 | Թիվ 150 դպրոց, Բակունցի 6 |
| 3/18 | Թիվ 125 դպրոց, Պ. Սևակի 89 |
| 4/17 | Երևան քաղաքի թիվ 7 սպորտդպրոց, Կոմիտաս 37 |
| 4/19 | Իսակովի անվան թիվ 132 դպրոց, Ա. Խաչատրյան 28 |
| 4/21 | «Հայերկրաբան» Ա/Մ կենտրոն, լաբ., Կոմիտաս 29 |
| 4/22 | Թիվ 29 մսուր-մանկապարտեզ, Կոմիտաս 30 |
| 4/23 | Գայի անվան թիվ 129 դպրոց, Հր. Քոչարի 29 |
| 4/25 | Թիվ 26 մ/մանկապարտեզ, Վ. Փափազյան 8 |
| 4/26 | Արվեստանոցին կից տարածք, Աղբյուր Սերոբ 7 |
| 4/34 | Թիվ 78 դպրոց, Բաղրամյան 59 |
| 5/13 | Թիվ 172 մ/ մանկ. /59 ՆՈՒՀ/, Դավթաշեն 2 թաղ. |
| 5/14 | Թիվ 172 մ/ մանկ. /59 ՆՈՒՀ/, Դավթաշեն 2 թաղ. |
| 5/37 | «Հայգյուղշիննախ» ինստ., Կիևյան 16 |
| 6/1 | Թիվ 131 դպրոց, Արզումանյան 22 |
| 6/2 | Թիվ 131 դպրոց, Արզումանյան 22 |
| 7/26 | Թիվ 89 դպրոց, Սեբաստիա 19 |
| 7/27 | Թիվ 111 դպրոց, Լուկաշինի 1 |
| 7/28 | Թիվ 111 դպրոց, Լուկաշինի 1 |
| 8/8 | Թիվ 179 դպրոց, Ա-3 թ. Օհանով 72 |
| 8/9 | Թիվ 179 դպրոց, Ա-3 թ. Օհանով 72 |
| 8/33 | Թիվ 144 դպրոց, Վ. Շենգավիթ 2փ. 9 |
| 9/14 | Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 դպրոց, Բուզանդ 107 |
| 9/15 | Արեգնազան կրթահամալիր, Սարյան 23 |
| 9/19 | Չարենցի անվան թիվ 67 դպրոց, Ամիրյան 9 |
| 9/26 | Վ. Վաղարշյանի անվան 80 դպրոց, Ծ. Իսակովի 2/1 |
| 9/27 | Հիդրոպոնիկայի պրոբլ. ինստիտուտ, Նորագյուղ 108 |
| 9/28 | Հիդրոպոնիկայի պրոբլ. ինստիտուտ, Նորագյուղ 108 |
| 9/32 | Թիվ 122 դպրոց, Արզումանյան 5 |
| 11/2 | Թիվ 32 դպրոց, Սևանի 32 |
| 11/13 | Ա. Բակունցի անվան քոլեջ, Նժդեհի 20 |
| 11/15 | Թիվ 32 դպրոց, Սևանի 32 |
| 12/29 | Թիվ 160 դպրոց, Ավանեսովի 10 |
| 12/34 | Ն. Խարբերդ 4 փ., 2 հողակտոր |
| 12/37 | Ն. Խարբերդ 4 փ., 2 հողակտոր 1-15 |
| 12/38 | Արշակունյաց 135/7, 5 հարկանի շենքի 1-ին հարկ |
| 13/22 | Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, Էրեբունու 15 |
| 13/23 | Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, Էրեբունու 15 |
| 13/28 | Թիվ 70 մանկապարտեզ, Վարդաշենի 6փ, 80 |
| 13/29 | Թիվ 101 դպրոց, Մուշական թաղ. |
| 13/31 | Էրեբունու 31, Էրեբունի փ. 31 |
| 13/34 | Թիվ 125 մանկապարտեզ, Նուբարաշեն 12փ. 1 |

*Հավելված 3*

## Ընտրատեղամասերում առկա խոչընդոտների վերաբերյալ թվային տեղեկություններ

1. *Ընտրատեղամասի բակում/փողոցում առկա խոչընդոտներ*

Բորդյուր

| | Քանակ | % |
|---|---|---|
| Առանց բորդյուրի մուտք | 410 | 88 |
| Բորդյուրի առանց թեքահարթակի | 55 | 11 |
| Բորդյուր թեքահարթակով | 2 | 1 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100.00 |

Բազրիք

| | Քանակ | % |
|---|---|---|
| Առանց աստիճանների մուտք | 419 | 90 |
| Բազրիքով աստիճան | 6 | 1 |
| Առանց բազրիքի աստիճան | 42 | 9 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100.00 |

Թեքահարթակ

| | Քանակ | % |
|---|---|---|
| Առանց աստիճանների մուտք (թեքահարթակի կարիք չկա) | 419 | 90 |
| Առկա է թեքահարթակ և համապատասխանում է մատչելիության չափանիշներին | 0 | 0 |
| Առկա է թեքահարթակ, սակայն չի համապատասխանում մատչելիության չափանիշներին | 14 | 3 |
| Թեքահարթակ չկա | 34 | 7 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100 |

2. *Շենքի մուտք*

Աստիճան

| | Քանակ | % |
|---|---|---|
| Առանց աստիճանների մուտք | 64 | 14 |
| Բազրիքով աստիճան | 30 | 6 |
| Առանց բազրիքի աստիճան | 373 | 80 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100.00 |

Թեքահարթակ

| | Քանակ | % |
|---|---|---|
| Առանց աստիճանների մուտք (թեքահարթակի կարիք չկա) | 64 | 14 |
| Առկա է մատչելիության չափանիշներին համապատասխանող թեքահարթակ | 11 | 2 |
| Առկա է մատչելիության չափանիշներին չհամապատասխանող թեքահարթակ | 88 | 19 |
| Թեքահարթակ չկա, բայց հնարավոր է կառուցել | 241 | 52 |
| Թեքահարթակ չկա և հնարավոր չէ կառուցել | 63 | 13 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100 |

3. *Մուտքի դուռ*

| | Քանակ | % |
|---|---|---|
| Մատչելի (70սմ-ից լայն) | 459 | 98 |
| Ոչ մատչելի (70սմ-ից նեղ) | 8 | 2 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100 |

4. *Ընտրատեղամասերի տեղադրվածություն*

| | Քանակ | % |
|---|---|---|
| 1 հարկ | 382 | 82 |
| 2 հարկ | 72 | 15 |
| Այլ հարկ | 13 | 3 |
| Ընդհանուր թիվը | 467 | 100 |

5. *Իրավիճակը ներսում*

*5.1 Առաջին հարկում գտնվող ընտրատեղամասեր՝ 382*

Թեքահարթակ

| | Քանակ | % |
|---|---|---|
| Ներսում աստիճաններ չկան (թեքահարթակի կարիք չկա) | 296 | 77 |
| Առկա է մատչելիության չափանիշներին համապատասխանող թեքահարթակ | 1 | 0.7 |
| Առկա է մատչելիության չափանիշներին չհամապատասխանող թեքահարթակ | 5 | 1.3 |
| Թեքահարթակ չկա, բայց հնարավոր է կառուցել | 25 | 7 |
| Թեքահարթակ չկա և հնարավոր չէ կառուցել | 55 | 14 |
| Ընդհանուր թիվը | 382 | 100 |

Շեմ

| | Քանակ | % |
|---|---|---|
| Ներսում շեմ չկա | 375 | 98 |
| Ներսում առկա է բարձր շեմ | 7 | 2 |
| Ընդհանուր թիվը | 382 | 100 |

*5.2 Երկրորդ կամ այլ հարկերում գտնվող ընտրատեղամասեր՝ 85*

Թեքահարթակ

| | Քանակ | % |
|---|---|---|
| Ներսում աստիճաններ չկան (թեքահարթակի կարիք չկա) | 69 | 81 |
| Առկա է մատչելիության չափանիշներին համապատասխանող թեքահարթակ | 0 | 0 |
| Առկա է մատչելիության չափանիշներին չհամապատասխանող թեքահարթակ | 0 | 0 |
| Թեքահարթակ չկա, բայց հնարավոր է կառուցել | 8 | 9.5 |
| Թեքահարթակ չկա և հնարավոր չէ կառուցել | 8 | 9.5 |
| Ընդհանուր թիվը | 85 | 100 |

Վերելակի առկայություն

| | Քանակ | % |
|---|---|---|
| Ընտրատեղամասը չի գտնվում 1 հարկում, սակայն վերելակ չկա | 85 | 100 |
| Ընդհանուր թիվը | 85 | 100 |

*Հավելված 4*

**Նախագահական ընտրությունների դիտարկման քարտ (քվեարկության օրը) ________**
**Երևան, 18 փետրվարի 2013թ.**

1. Ընտրատեղամաս թիվ ________
2. Տեղամասային հանձնաժողովի նախագահի անուն, ազգանունը ________________________
3. Տվյալ տեղամասում ձեր դիտորդության ժամերը՝ սկիզբ _______ վերջ _______
4. Արդյո՞ք սայլակով ընտրողը կարող է քվեարկել քվեախցում

*1) այո*
*2) ոչ (նկարագրեք)* ________________________________________________________________

5. Առկա՞ էր արդյոք տեղամասում կույր ընտրողների համար նախատեսված հատուկ կաղապարը

*1) այո*
*2) ոչ (նկարագրեք)* ________________________________________________________________

6. Առկա՞ էր արդյոք տեղամասում վատ տեսողություն ունեցող ընտրողների համար նախատեսված ոսպնյակը։

*1) այո*
*2) ոչ (նկարագրեք)* ________________________________________________________________

7. Այլ մեկնաբանություններ (շարժական թեքահարթակի առկայություն և այլն) _________

______________________________________________________________________________________

Լրացրեց ______________________________ Ընդունեց ______________________________